ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ----- 2024 թվականի №-Ա

## «ՖԱՍՏԼԻՆԿ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՆՐԱՅԻՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՉԱՐՁԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Տելեկոմ Արմենիա» բաց բաժնետիրական ընկերությունը 2024 թվականի փետրվարի 2-ի №209/24-1 գրությամբ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին (այսուհետ՝ Հանձնաժողով) տեղեկացրել է Տավուշի մարզում ինտերնետ հասանելիության ծառայություններ մատուցող «Ֆաստլինկ» («Fastlink») անվանումով հանդես եկող ընկերության մասին,

բ) «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե Հանձնաժողովը բավարար հիմքեր ունի եզրակացնելու, որ անձը շահագործում է հանրային էլեկտրոնային հաղորդակցության չլիցենզավորված ցանց կամ մատուցում է հանրային էլեկտրոնային հաղորդակցության չծանուցված ծառայություններ, ապա նա իրավասու է սեփական նախաձեռնությամբ կամ ցանկացած անձի դիմումի հիման վրա խնդրո առարկա անձի նկատմամբ արձակել դադարեցման կարգադրություն,

գ) «ՖԱՍՏԼԻՆԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) Օրենքի համաձայն չի հանդիսանում կարգավորվող անձ, Հանձնաժողովը վերջինիս նկատմամբ նախաձեռնել է առանց լիցենզիայի հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի շահագործումը կամ հանրային էլեկտրոնային հաղորդակցության չծանուցված ծառայությունների մատուցումը դադարեցնելու

վերաբերյալ գործընթաց, որի մասին Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2024 թվականի փետրվարի 7-ի №ՍՇ/34.2-Մ2-8/451-2024 գրությամբ,

դ) Ընկերության կողմից հանրային էլեկտրոնային հաղորդակցության չլիցենզավորված ցանցի շահագործումը և հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցումը դադարեցնելու վերաբերյալ գործընթացի շրջանակում Ընկերությունը բանավոր քննարկումների ընթացքում տեղեկացրել է, որ Տավուշի մարզում խնդրո առարկա ինտերնետ հասանելիության ծառայությունները մատուցվում են «ԱՅ ԷՍ ՓԻ ՍԸՓՈՐԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցով և ծառայությունների համար վճարումները կատարվում են վերջինիս անվամբ, ինչի կապակցությամբ պարզաբանում ստանալու նպատակով՝ Հանձնաժողովը 2024 թվականի փետրվարի 23-ի №ՍՇ/34.2-Մ2-8/722-2024 գրությամբ դիմել է «ԱՅ ԷՍ ՓԻ ՍԸՓՈՐԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը,

ե) «ԱՅ ԷՍ ՓԻ ՍԸՓՈՐԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը 2024 թվականի մարտի 6-ի գրությամբ տեղեկացրել է, որ 2022 թվականի սեպտեմբեր ամսից Ընկերության տեղեկատվական ցանցը տեղափոխվել է իր հաշվեկշռին, և խնդրո առարկա ինտերնետ ծառայությունները տրամադրվում են «ԱՅ ԷՍ ՓԻ ՍԸՓՈՐԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից՝ համաձայն՝ վերջինիս Հանձնաժողովի կողմից տրամադրված հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի լիցենզիայի,

զ) մինչև 2022 թվականի սեպտեմբեր ամիսն, Ընկերության կողմից հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի շահագործման վերաբերյալ պարզաբանում ստանալու նպատակով, Հանձնաժողովը 2024 թվականի մարտի 12-ի №ՍՇ/34.2-Մ2-8/994-2024 գրությամբ դիմել է Ընկերությանը, որին ի պատասխան՝ վերջինս 2024 թվականի մարտի 18-ի գրությամբ հայտնել է, որ 2018 թվականի սեպտեմբերից մինչև 2022 թվականը «Ֆաստլինկ» («Fastlink») ապրանքանիշով ծառայությունները մատուցվել են ոչ թե Ընկերության, այլ անհատ ձեռնարկատեր Գուրգեն Մուքայելյանի հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցով՝ համաձայն Հանձնաժողովի 2022 թվականի սեպտեմբերի 19-ի №359Ա որոշմամբ տրամադրված հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի №1271 լիցենզիայի, որն ուժը կորցրած է ճանաչվել Հանձնաժողովի 2022 թվականի սեպտեմբերի 22-ի №371Ա որոշմամբ, և նշված

ժամանակահատվածից հետո, անհատ ձեռնարկատեր Գուրգեն Մուքայելյանի հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցը տեղափոխվել է «ԱՅ ԷՍ ՓԻ ՍԸՓՈՐԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հաշվեկշռին,

է) Օրենքի 60-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե Հանձնաժողովը որոշում է, որ բողոքի առարկա գործողություններ տեղի չեն ունեցել, ապա դադարեցման մասին կարգադրություն չի արձակվում,

ը) Ընկերության կողմից առանց լիցենզիայի հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի շահագործումը կամ հանրային էլեկտրոնային հաղորդակցության չծանուցված ծառայությունների մատուցումը դադարեցնելու գործընթացի շրջանակում պարզվել է, որ Ընկերության կողմից բողոքի առարկա գործողություն տեղի չի ունեցել՝ Ընկերությունը հանրային էլեկտրոնային հաղորդակցության չլիցենզավորված ցանց չի շահագործել և չծանուցված ծառայություններ չի մատուցել, ուստի՝ Ընկերության նկատմամբ դադարեցման կարգադրություն արձակելու հիմքերը բացակայում են, և

հիմք ընդունելով Օրենքի 60-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետը և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է**.

1. Ընկերության նկատմամբ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի շահագործումը և հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցումը դադարեցնելու կարգադրություն չարձակել:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝** **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- --------2024թ.